

**«ՍՊԻՐՈՄԵՏՐԻԱ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՅԻ**

**2024թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Էրեբունի» ԲԿ, «Իզմիրյան» ԲԿ) և ՀՀ մարզեր**

**ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**

- Թիրախային լսարան՝ թոքաբաններ, ֆթիզիատրներ, թերապևտներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 5-50
- մասնակիցներին շնորհել ՇՄՁ 20 տեսական և 30 գործնական կրեդիտ.  
դասավանդող Մարինե Պետրոսյանին՝ ՇՄՁ 20 տեսական և 30 գործնական կրեդիտ
- Կոնտակտ՝ 011300088

<b>Շաբաթ 1</b>	
<b>Օր 1</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> 1. Շնչառական պրոցեսի փուլերը: 2. Արտաքին շնչառության բաղադրիչները: 3. Սպիրոմետրիան որպես արտաքին շնչառության մի փուլ՝ ավելոյար վենտիլյացիան գնահատող հետազոտություն: 4. Սպիրոմետրիան որպես գլոբալ առողջության և կյանքի տևողությունը կանխատեսող հետազոտություն՝ շնչառական և ոչ շնչառական հիվանդությունների դեպքում
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Արձանագրված սպիրոմետրիայի տվյալների ցուցադրում, մեկնաբանում, նրանց կլինիկական նշանակության բացահայտում
<b>Օր 2</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Սպիրոմետրիայի պոտենցիալ տրանսկտորիան կյանքի ընթացքում և դրա վրա ազդող գործոնները: Սպիրոմետրերի և սպիրոգրաֆների ստեղծման պատմությունը: Սպիրոմետրիայի ցուցումները: Սպիրոմետրիայի դերը ախտորոշում և տարբերակիչ ախտորոշում կայացնելու գործում
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրերի տեսակների ցուցադրում, նրանց հետ աշխատելու նրբությունների բացահայտում

<b>Օր 3</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Սպիրոմետրիայի հակացուցումները: Սպիրոմետրիա կատարելու տեխնիկական պահանջները և նրբությունները: Սպիրոմետրիա իրականացնելու որակի հսկողություն՝ կատարված սպիրոմետրիայի ընդունելի լինելու չափանիշները: Թեստի վերարտադրելիությունը: Հետազոտվողի վիճակի գնահատումը թեստը կատարելուց առաջ
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիայի կատարում, թեստի ընդունելի լինելու գնահատում
<b>Օր 4</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Սպիրոմետրիայի տվյալների դերը ընդհանուր առողջական վիճակը գնահատելու գործում: Թոքերի ծավալները և տարողությունները: Սպիրոմետրիայի ցուցանիշները: Ծավալ-ժամանակ կորը
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիայի կատարում: Ծավալ կորի քննարկում
<b>Օր 5</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Հոսք-ծավալ կորը և նրա առավելությունները: Սպիրոմետրիայի փաստացի (actual) և սահմանված (predicted) տվյալները: Շեղման տոկոսի հաշվարկումը: Թոքերի վենտիլյացիոն ֆունկցիայի գնահատումը ըստ Z-score-ի: Թոքերի կենսական տարողությունը և նրա նվազման պատճառները
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիայի կատարում: Հոսք-ծավալ կորի քննարկում: Փաստացի տվյալների շեղման տոկոսի հաշվարկում: Սպիրոմետրիայի գնահատումը ըստ սահմանված տվյալների և Z-score-ի
<b>Շաբաթ 2</b>	
<b>Օր 1</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Արագ արտաշնչված ծավալը 1-ին վարկյանում՝ ԱՄԾ1-ի կլինիկական նշանակությունը: Տիֆնո ինդեքսի կլինիկական նշանակությունը: Արտաշնչման պիկային արագությունը (PEF), արտաշնչման հոսքի արագության ցուցանիշը (FEF <sub>25-75%</sub> ): Թոքերի վենտիլյացիոն ֆունկցիայի խանգարման տիպերը
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիայի կատարում և գնահատում՝ Տիֆնո ինդեքս, PEF, FEV1
<b>Օր 2</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Թոքերի վենտիլյացիոն ֆունկցիայի խանգարում՝ օբստրուկտիվ տիպի բնութագրումը, խանգարման աստիճանի որոշումը: Սպիրոմետրիայի դերը թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության ախտորոշման գործում: Սպիրոմետրիայի դերը բրոնխիալ ասթմայի և թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության տարբերակիչ ախտորոշման գործում: Շնչուղիների օբստրուկցիայի մակարդակի գնահատումը ըստ GOLD 2024-ի
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b>

	Սպիրոմետրիայի կատարում: Օբստրուկտիվ տիպի խանգարման ձայնագրված դեպքերի քննարկում: GOLD 2024-ի սահմանման կիրառումը կոնկրետ դեպքերի օրինակի վրա
<b>Օր 3</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Թոքերի վենտիլյացիոն ֆունկցիայի խանգարում՝ ռեստրիկտիվ տիպի բնութագրումը, խանգարման աստիճանի որոշումը: Սպիրոմետրիայի տվյալների գնահատման ալգորիթմը: Սպիրոմետրիայի եզրակացության ձևակերպումը
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիայի արդյունքների քննարկում՝ ռեստրիկտիվ խանգարում: Սպիրոմետրիայի գնահատման ալգորիթմի պրակտիկ կիրառում: Սպիրոմետրիայի եզրակացության ձևակերպում առկա սպիրոմետրիայի տվյալների հիման վրա
<b>Օր 4</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Բրոնխալայնիչ թեստի կլինիկական նշանակությունը և կատարման կարգը: Բրոնխալայնիչ թեստի նախապատրաստումը: Բրոնխալայնիչ թեստի արդյունքների մեկնաբանությունը և պատասխանի ձևակերպումը: Բրոնխապրովոկացիոն թեստի կլինիկական նշանակությունը, տեսակները, կիրառման ցուցումները, հակացուցումները և գնահատման չափանիշները
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիա բրոնխալայնիչ թեստով՝ բրոնխալայնիչ թեստի ցուցադրում, արդյունքների գնահատում, եզրակացության ձևակերպում
<b>Օր 5</b>	
2 ժամ	<b>Դասախոսություն</b> Սպիրոմետրիայի մեկնաբանությունը ըստ ընդհանուր տպավորության մեթոդի (Gestalt method)՝ իդեալական կոր և սխալներով կատարված սպիրոմետրիայի կորեր: Հոսք-ծավալ կորեր՝ օբստրուկտիվ կոր, ռեստրիկտիվ կոր, էմֆիզեմատոզ կոր: Հոսք-ծավալ կորեր՝ ինտրաթորակալ օբստրուկցիա, էքստրաթորակալ օբստրուկցիա, ֆիքսված օբստրուկցիա. կորեր
3 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Սպիրոմետրիայի կատարում: Սպիրոմետրիայի արդյունքների քննարկում: Կլինիկական դեպքեր և սպիրոմետրիայի տվյալներ: Բարդ դեպքեր՝ կլինիկական պատկերի և սպիրոմետրիայի տվյալների անհամապատասխանություն: Թեստավորում

Դասավանդող՝ պրոֆ. Մարինե Պետրոսյան:

: